829 ՏԱՐԻ ԱՆՑ

ՀՌՈՄԿԼԱՅԵՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

17 ապրիլ 1166 Ծաղկազարդի Կիրակի էր և Հռոմկլայի Կաթողիկոսարանը կթնդար ուրախությամբ, այդ օրը տեղի կունենար գահակալությունը Հայ Եկեղեցու ամենաերկարակյաց Հայրապետին՝ Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսի հաջորդին: Արդարև, Գրիգորը, որը 53 տարիներ կաթողիկոսություն վարելեն ետո Հռոմկլայի մեջ հրավիրած էր Ազգային եկեղեցական ժողով, որպեսզի ընտրվի իր հաջորդը, որը անձ մը պիտի չըլլար, քան իր իսկ հարազատ եղբայրը՝ Ներսես Կլայեցին, այլապես հռչականուն իբրև Ս. Ներսես Շնորհալի: Անշուշտ, Գրիգոր Պահլավունին հաճախ և քանիցս ջանացած էր համոզել իր եղբայրը, որպեսզի ընդունի Հայրապետությունը, սակայն Ներսես Կլայեցին միշտ էլ մերժած էր, ինչպես ինքն իսկ կասեր՝ իր գահակալության օրվա քարոզի մեջ, թե «նախապես չիրագործվելու պատճառը ոչ թե Գրիգորի Իշխանական կամքը այլ միշտ մեր հրաժարիլն էր մեր անձի տկարության և հոգևոր աղքատության պատճառավ»: Եվ այսպես, Ծաղկազարդի այդ առավոտյան Ներսես Կլայեցին կհաջորդեր «ըստ մարմնո իրեն եղբոր և հոգվո իրեն հայր Գրիգորին» (Ներսես Շնորհալի կթղ., Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 270):

Եվ ահա 829 տարիներ հետո դարձյալ Ծաղկազարդի կիրակի առավոտ՝ Կիլիկիո շնորհազարդ Հայրապետը, Տ. Տ. Գարեգին Բ-ն պիտի բարձրանա Սուրբ Էջմիածնի Աթոռը: Այդ օրը, վստահ ենք, որ հոգևոր կերպով Ս. Էջմիածնի մեջ ներկա է հոգելույս Վազգեն Ա. Հայրապետը՝ ուրիշ եր-

կարակյաց մի կաթողիկոս, որ ի սրտե երջանիկ է, կհավատանք, տեսնելով, որ իր հոգեհարազատ կրտսեր եղբայրը՝ Կիլիկիո Գարեգին Կաթողիկոսը կբարձրանա Լուսավորչի գահը, հաջորդելով իրեն: Գուցեև իր թաքուն փափագն էր, որ ահա դարձավ իրականություն, քանի որ Գարեգին Կաթողիկոսը, որին ինքը կնայեր եղբոր և որդու նման, ստանձնում է Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնը: Ահա այսպես, դարերի կամարումով մեր Եկեղեցու մեջ կկրկնվի բազում նմանություններով և գեղեցիկ ներշնչումներով հայրապետական մի հաջորդություն:

Մեր սրտագին մաղթանքն է, որ մեր օրերի շնորհալին, Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո, որ իր ընդհանրական հանրապետության և Ս. Էջմիածնի գահին բարձրանալով ստանում է Գարեգին Ա կոչումը, լիովին կըկարողանա արդարացնել այն բոլոր սպասելիքները, որոնք կապված են իր անձին, իր աստվածատուր շնորհներուն և իր նախկին հանգամանքին:

Գուցե չափից ավելի կխորանանք պատմության մեջ և պատմության նշանները կարդալու արհեստական ճիգ կգործադրենք, բայց բնական է, երբ խոսքը վերաբերում է Գարեգին Կաթողիկոսի անձին, որը 40 և ավելի տարիներ շարունակ հայոց պատմություն ուսուցանեց իր աշակերտներին, Հայ Եկեղեցու պատմության էջերից ներշնչումի դրվագներ բաժանեց իր շրջապատին, և ի վերջո, բոլորից ավել ինքն ունի պատմության հղացքը և կարող է կարդալ պատմության խորհուրդը:

Այս հիմքի վրա միայն կարելի է ըմբռնել, թե մարտի 29-ին, երբ Գարեգին Կաթողիկոսը դուրս եկավ Անթիլիասի Մայրավանքից, ինչու նախ կանոնական աղոթք արեց Մայր տաճարի մեջ, առանձնակի աղոթք Ապրիլյան նահատակների հուշարձանի մոտ: Եվ դրանից հետո այցելեց Կիլիկիո հանգուցյալ Կաթողիկոսների շիրիմներին, հոգվոց կարդաց նրանց հոգիներին... Նրանցից գուցե ընդմիշտ կհեռանար՝ իր կյանքը կապելու համար Ս. Էջմիածնի Կաթողիկոսներին և նրանց հիշատակին:

Միշտ չէ, որ կաթողիկոս այս ձևով կհրաժարվի Կաթողիկոսական գահ գրավելու և կարելի է ասել, որ այս դեպքը իրոք եզակի է, երբ Հայ Եկեղեցու նվիրապետական համակարգի մեջ, խաղաղ պայմանների ներքո, մի կաթողիկոս թողնում է իր Հայրապետական Աթոռը և հրավիրվում է ստանձնելու մի այլ Կաթողիկոսական Աթոռ: Անշուշտ, մոտավոր թե հեռավոր օրինակներ կարելի է գտնել, օրինակ՝ Զաքարիա Աղթամարցին, որ 1450-ական թվականներին բռնագրավեց Էջմիածնի Աթոռը Գրիգոր Զալալբեկյանից, ավելի ուշ խույս տալու համար Էջմիածնից և Աղթամարի իր Աթոռը վերադառնալու, կամ էլ կարելի է հիշել մեկ ուրիշ եզակի դեմք Հայ Եկեղեցու պատմության մեջ: Երբ Երուսաղեմի մեջ 1649 թվականին ընտրվելով Պատրիարք, 1651-ին Պոլսի Պատրիարք, հետո կարողացավ Հալեպի մեջ օծվել օսմանյան հպատակության տակ գտնվող հայերի Կաթողիկոս:

Ահա մի քանի վարկածներ, որոնք վստահաբար առատ նյութ են տալիս խորհրդածության համար:

Գարեգին Կաթողիկոսի ընտրությունը ոմանք դիտում են Էջմիածնի գերագույն հաղթանակը պատմության դառը ճակատագրի դեմ: Ինչպես գիտենք, Ս. Էջմիածինը, որ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Հայ Եկեղեցու կենտրոնն էր, շատ շուտով կորցրեց այդ դեը և, ըստ ընդունված կարծիքի, 484 թվականից ի վեր իր դիրքը զիջել էր տարբեր քաղաքական կենտրոնների՝ նախ մայր հայրենիքի մեջ՝ Դվինից մինչև Անի և Արգինա

և Աղթամար, այնտեղից դեպի հայ կյանքի նոր կենտրոններ՝ Ծամնդավը, Հռոմկլա և Սիս:

Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը 1293 թ. ի վեր հաստատված էր հայոց Կիլիկիո մայրաքաղաքի՝ Սսի մեջ և այնտեղ մնաց 1375-ից հետո, երբ Կիլիկիան հայտնվեց տարբեր ուժերի ազդեցության տակ:

Կարելի է ենթադրել, որ այժմ, երբ Կիլիկիո Աթոռը կորցրեց իր շնորհալի Հայրապետին, հանուն ազգի և Եկեղեցու գերագույն շահերի, պետք է ընտրի իր Կաթողիկոսական Տեղապահը և հավանաբար առաջիկա հոկտեմբերին Գարեգին Բ Կաթողիկոսի հաջորդը, որը հուսով ենք կգործի և կծառայի մեկ ազգ, մեկ հայրենիք և մեկ Եկեղեցի նշանաբանով: Բարի երթ նաև Կիլիկիո ապագա Կաթողիկոսին:

Բայց եկեք այսօր ուրախանանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությամբ և մեր շնորհավորանքը, սերն ու հարգանքը մատուցենք մեր ժամանակների ամենաարժանավոր հոգևորականին՝ մտքի, սրտի և հոգու ամենաստուր շնորհներով օժտված Գարեգին Հայրապետին, որը Ս. Էջմիածնի Աթոռին է բազմում անկախ Հայաստանի օրոք:

Համազգային այն սերը և համաժողովրդական այն խանդավառությունը, որի արձագանքները լսվում են Երևանի և Հայաստանի տարածքում, համոզում են մեզ, որ Գարեգին Ա-ն օրվա և ժամանակի մարդն է, որի առաջին հանգրվանը պետք է լինի հայոց դարձի 1700-ամյակը:

Պարագաների բերումով հեռու եմ հայրենիքից և Սուրբ Էջմիածնից: Բայց կիրակի օրը, Ծաղկազարդի զվարթ ու երջանիկ առավոտը իմ աղոթքները պիտի միանան Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի մեջ և շուրջը խըմբված հազարավոր հայորդիներին՝ աղոթելու համար Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երջանիկ և բարեբաստիկ գահակալության համար:

Եվ ո՞վ գիտե, այսուհետ Մայր տաճարի ելքին, երբ խաղաղության և սիրո խորհրդանիշ՝ ապիտակ աղավնիներ պիտի թևածեն դեպի Տրդատի դուռ, մինչև Վեհարան, մինչև Ներսիսյան լիճ և Խրիմյան աստղադիտարան, հազար-հազար շուրթերից պիտի լսվի «Կիլիկիան» և լույսի ու հույսի մի շող պիտի ծավալի հայոց հոգիներում:

Եվ գեղեցիկ միաբանությամբ իրար պիտի միանան Հայաստանն ու Արցախը, մինչև ցանկալի Կիլիկիան՝ մեկ ազգ և մեկ հայրենիք տեսլականով և Լուսավորչի լույս հավատքով:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԱՇՃՅԱՆ